ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հունիսի 2025 թ. N 114-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՋԻ ԷՅՋ ԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի հունիսի 27-ի դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ՋԻ ԷՅՋ ԱՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Շինարարության իրականացում» 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-002400) «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» (ՔՊՆ-002400-04) ենթատեսակի ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի մայիսի 31-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

7/22/2025

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ